ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N 1667-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«___» «_____» 2025 թվականի N ___ - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N 1667-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Սևանա լճի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «գ1» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի «Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների վերականգնման, պահպանման, վերարտադրման, ինչպես նաև դրանց պաշարների որոշման, ձկան և խեցգետնի արդյունագործական որսի քանակների, ձևերի և կազմակերպման կարգը սահմանելու մասին» N 1667-Ն որոշման՝

- N 1 հավելվածում 3-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2) Համաձայն «Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «գ1» կետի յուրաքանչյուր տարի Կառավարության կողմից սահմանվում են Սևանա լճում ձկան և խեցգետնի արդյունագործական որսի չափաքանակները և ժամկետները, արդյունագործական որսի կազմակերպման պայմաններն ու պահանջները.»,

- N 3 հավելվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3.Սևանա լճում արդյունագործական նպատակներով ձկան և խեցգետնի որս

իրականացնելու պայմանագրեր (այսուհետ՝ պայմանագիր) կնքելու համար հիմք են հանդիսանում յուրաքանչյուր տարի Կառավարության կողմից սահմանված դրանց օգտագործման տարեկան առավելագույն չափաքանակները,

- N 3 հավելվածի 1 և 5.2 կետերում «տարեկան ծրագրով» բառերը փոխարինել «յուրաքանչյուր տարի Կառավարության կողմից» բառերով,
- Ձև N 1-ի ծանոթագրության պարբերության «տարեկան ծրագրով» բառերը փոխարինել «յուրաքանչյուր տարի Կառավարության կողմից» բառերով։
- Ձև N 2-ի 4.12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2.4.12. գործել յուրաքանչյուր տարի Կառավարության կողմից սահմանված Սևանա լճում ձկան և խեցգետնի արդյունագործական որսի չափաքանակներին և ժամկետներին, արդյունագործական որսի կազմակերպման պայմաններին ու պահանջներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի N 1667-Ն որոշման N 1 հավելվածի 5-րդ և 6-րդ կետերով սահմանված պահանջներին համապատասխան:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության վարչապետ **Ն. Փաշինյան**

Հ